Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՃՏ 2021. «Արյունաբանական կենտրոնին բժշկական սարքավորման տրամադրման» դրամաշնորհային ծրագրի եզրափակիչ արարողություն

2023թ. հունվարի 13-ին Պրոֆեսոր Ռ.Օ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոնում տեղի ունեցավ «Արյունաբանական կենտրոնին բժշկական սարքավորման տրամադրման ծրագրի» 92,772 ԱՄՆ դոլար արժողությամբ դրամաշնորհային պայմանագրի եզրափակիչ արարողությունը՝ Ճապոնիայի կառավարության Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության շրջանակում:

Արարողությանը ներկա էին ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան պարոն Մասանորի Ֆուկուշիման, Առողջապահության նախարարի առաջին տեղակալ, տիկին Լենա Նանուշյանը, Արյունաբանական կենտրոնի տնօրեն պարոն Սամվել Դանիելյանը, ինչպես նաև այլ շահառուներ և շահագրգիռ կողմեր:

Ծրագրի նպատակն էր բարելավել արյան քաղցկեղի ախտորոշման և մոնիտորինգի որակը՝ Արյունաբանական կենտրոնում տեղադրելով նոր հոսքային ցիտոմետր: Այս նախագիծն էլ ավելի կբարձրացնի Հայաստանի Հանրապետության բժշկական մակարդակը: Արդյունքում տարեկան ավելի քան 400 մարդ կօգտվի տվյալ ծրագրից:

Դեսպան Ֆուկուշիմայի ելույթը (ձախից՝ տիկին Նանուշյանը, բժիշկ Դանիելյանը և դեսպան Ֆուկուշիման)

Շրջայց կենտրոնում



Տրամադրված հոսքային ցիտոմետրը և համակարգիչը

Սենյակը, որտեղ տեղադրված է սարքավորումը